# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

<< 19 >> մարտի 2019թ. N ԱՄ/27-2019

ք. Արմավիր

## <<ԼԵՆՈՒՂՈՒ ՁԻՎԱՆՈՒ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1793-Ն որոշման 3-րդ կետի <<ա>> ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի կանոնադրության 15-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2019 թվականի մարտի 13-ի N ՄՌ/88-2019 և 2019 թվականի մարտի 14-ի N ՄՌ/91-2019 որոշումները, <<Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի և գույքի հանձնման–ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**կարգադրում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Լենուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Վարդանուշ Ավետյանին (համաձայնությամբ):
3. Հանձնաժողովին (Ն. Սարգսյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել հնգօրյա ժամկետում և արդյունքների մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

3/19/2019

X

VERIFIED OCSP 3/19/2019 16:03:18 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230 Հ.

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2018 թվականի 19 մարտ ի

Ն19/N7-2019 կարգադրության

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

Ն. Սարգսյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ:

**Անդամներ՝**

Գ. Գևորգյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի առաջատար մասնագետ:

Ս. Սաֆարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ:

**Հանձնող՝**

Փառանձեմ Աֆյան - <<Լեռնուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության նախկին տնօրեն:

**Ընդունող՝**

Մարիա Տեր-Անտոնյան - <<Լեռնուղու Ջիվանու անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար:

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Վ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 18.03.2019 10:50:34 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217